

Ամենայն Հայոց Հայրապետի Դիմումագրերը

ԱԿԱԴՆԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻՆ,
ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄՅՈՒՍ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ

Մ Ո Ս Կ Վ Ա

Խոր հուզումով տեղեկացամք Ձեր հացադուլի հայտարարությամբ մասին, իբրև հուսա-
հատ բողոք ընդդեմ միմյեռ երկիմբ աղաղակող ամբողջությունների, ողբերգական
կացությունների, որոնց ենթարկված է Լեռնային Ղարաբաղի ողջ հայ ազգաբնակչություն-
ը, մամավամդ վերջին ամիսներին, որոնց միակ մեղքը այն է, որ կամենում են ազատ
շնչել:

Մենք հայրական վշտի եւ բողոքի Մեր ձայնն ենք բարձրացնում համայն մեր
ժողովրդի հետ միատեղ եւ ողբում ենք դառը մակատագիրը զարաբաղցի մեր հավատացյալ
զավակների ու հոգեւին խոնարհվում ենք Ձեր հերոսական արարքի առաջ, որ արտահայտում
է ողջ հայ ազգի խղճի սրբազան աղաղակը:

Մեր հայրապետական պարտքն ենք համարում այսօր իսկ Սուրբ Էջմիածնից Մեր աղերսը
հղելու Խորհրդային Միության Պրեզիտենտին, կոչ անելով մրա մարդասիրական եւ արդա-
րության զգացումներին:

Ձեր այս տառապանքի պահերին լսեցեք ձայնը Հիսուսի. « Երամի որք քաղցեալ եւ
ծարաւի իցեմ արդարութեամբ. զի մօքա յարգեսցիմ »:

Ընդունեցեք Մեր սրտակցությունը, Մեր քաջալերամբը, Մեր օրհնությունը

Վազգէմ Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

15 Սեպտեմբեր 1990

Ս. Էջմիածին

ԽԱՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ

Մ. Ս. ԳՈՐԲԱՋՈՎԻՆ

ԿԻԵՄԼ, ՄՈՍԿՎԱ

Ի լրացումն Մեր 13 Սեպտեմբերի հեռագրի, բեկյալ սրտով կրկին դիմում ենք Ձերդ
գերազանցության, Ձեր մարդասիրական զգացումներին որ խմայեք կյանքը հացադուլ հայ-
տաբարած ժողովրդական դեպուտատներ ախաղեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, լրագրող
Զորի Բալայանի, արվեստագետ Սոս Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի դեպուտատների եւ
մյուսների, որոնց հուսահատ աղերսամբն է որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում
վերականգնվի Խորհրդային իշխանությունը ուղղակի Ձեր պրեզիդենտական հեղինակության
մերքո, որ կլինի իրավես արդար մի վերաբերմունք Ձեր կողմից՝ փրկելու համար այդ
մարզի հայ ազգաբնակչությունը Ձեզի արդեն ծանոթ ամուսնուղի եզրին հասած ողբերգական
կացությունից:

Ամենախորին հարգանքով՝

Վազգէմ Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

15 Սեպտեմբեր 1990 թ.

Ս. Էջմիածին:

ՄԵԾԱՅԱՐԳ

ՄԻՍԱՅԻԼ ՍԵՐԿԵՆՎԻԶ ԳՈՐԲԱԶՈՎԻՆ

ՊԵՏԻԴԵՆՏ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Մ Ո Ս Կ Վ Ա

Գոհումակությամբ հաստատում ենք Մեր 7 Սեպտեմբեր 1990 թվակիր մամակը ի պատասխան Ձեր կարեւոր մամակի որ Մեզ համձմվեց Օգոստոս ամսի սկիզբներին:

Այսօր ստիպված ենք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովմունքով, տեղեկացնելու համար որ Լեոնայիմ Ղարաբաղի հայ ազգաբնակչության վիճակը դարձած է ողբերգական մասն եկեղեցական կյանքում:

Լեոնայիմ Ղարաբաղի հոգեւոր առաջնորդը Պարգեւ Եպիսկոպոս հաղորդեց Մեզ թե Կիրակի օր 9 Սեպտեմբերին, Ամարասի հայկական վանքում, / հիմնված 4-րդ դարում/, հանդիսավոր պատարագից հետո, գիշերը երկու անգամ եմթարկված է հարձակումների բանակային համագրգեստով անձանց կողմից որոնք կրակ են բացած վանքի պատերին, սարսափի մատմելով հոգեւոր ծառայողներին եւ անգեմ պահակներին: Վտանգի տակ են մոր վերաբացված մեր հիմք վանքերն ու եկեղեցիները եւ մեր հոգեւորականների կյանքը:

Դիմում ենք Ձեզ ծանր ապրումներով, սակայն տակավին հույսով որ Ձեր բարձր հեղինակությամբ եւ օրենքի ուժով, եւ ազգությունների ինքնորոշման իրավունքով, վերջ կգտնի Լեոնայիմ Ղարաբաղում հայերի ողբերգությունը, ինքնավար այդ մարզը դնելով Ձեր պրեզիդենտական իշխանության ներքեւ: Ամիրավված հայերի համբերության բաժակը վաղուց լցված է, եւ նրանք պատրաստ են ազատ մեղմելու քան ստրուկ ապրելու, ինչպես հերոսները Տերմոպիլի, Վալմիի եւ Կուլիկովի:

Ձեր չափազանց բազմազբաղ եւ տագնապալի այս օրերին, խնդրում ենք մի պահ զոնե Ձեր ուշադրությունը ուղղելիք դեպի Լեոնայիմ Ղարաբաղում տառապող մեր ժողովուրդը եւ Ձեր խաղաղարար արդար մի վճիռով փրկելիք նրանց, համում Ձեր հռչակած հումանիտական մեծ գաղափարների, հօգուտ մասն աղբյուրների մեր հարեւան ժողովուրդի կյանքի խաղաղության:

Թույլ տվեք վերջացնել Մեր խոսքը Լամարտիմի տողերով՝ « Ուժեղների փառքը տկարների ազատությունն է »:

Խորին հարգանքով եւ օրհնությամբ՝

Վազգեն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

18 Սեպտեմբեր 1990 թ.

Ս. Էջմիածին: